յուզուած են այն դիմումից, որ Ֆրանսիայի, Անգլիայի և միւս քաղաքակիրթ երկրների մարդկութեան պաշտպանները ուղղել են Ձեր վեհանձն համակրութեան, ի նպաստ արիւնաշաղախ Հայաստանի հարցին։

Ձեր պաշտպանութեան տակ առնելով խաղաղ, աշխատասէր և քաղաքակրթութեան կապուած մի ազգ, որին իր բռնաւորները զլանում են մինչև իսկ գոյութեան ամենատարրական իրաւունքները, դուք ամենափայլուն մարդկօգուտ մի գործով պսակած պիտի լինիք ձեր բարիքների շարքը, և այնքան փառաւոր կերպով նախագահած Ձեր մեծ ազգը պիտի լիացնէք այն մարտիրոսների յաւիտենական երախտագիտութեամբ, որոնք կեանքի պիտ կոչած լինիք»։

Նման բովանդակութեան հեռագիրներ էլ ուղղել են Բրայլայի, Աղէքսանդրիայի, Կահիրէի և Լօզանի հայերը և մի հանրագրութիւն է ուղարկուած Սլիվէնի հայերի կողմից։

ՌՈՒԶՎԷԼՏԻ ՄԵՐԺՈՒՄԸ

Ջէյմս պ. Ռէյնօլդսին,

Պարոն,

Նախագահը յանձնել է ինձ յայտնելու ձեզ, որ ընդունուած է ձեր յունուար 13-ի նամակը, որի հետ ներկայացրել էիք և մի խնդրագիր, հաւաքաբար ստորագրուած Ֆրանսիայի, Իտալիայի, Բէլգիայի, Շուէդիայի, Դանիայի, Մեծն-Բրիտանիայի, Հօլլանդիայի, Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի ազդեցիկ անձնաւորութիւնների կողմից, որով կոչ են անում նախագահին Թիւրքահպատակ հայերի կրած անգթութիւնների առաջն առնելու։

Այդ խնդրատուների բարձր դիրքը, եթէ հնարաւոր լինէր աւելի ես պիտի շահագրգռէր նախագահին այդ խնդրով, որին արդէն անցած տարիների ընթացքում նա իր անկեղծ ուշադրութիւնն էր նուիրած։

Բոլոր երկրների ճնշուածների հանդէպ տածած ամերիկացի ժողովուրդի կարեկցութիւնը, որ յաջորդաբար արտայայտուած էր այս կառավարութեան այլ և այլ միջոցներով, անբախտ հայերի նկատմամբ էլ արտայայտուել է պերճախօս կերպով։ Միանգամայն դուրս է ամեն կասկածից, որ նախագահը կը ցանկայ, որ հայերը վայելեն կեանքի ու գոյքի ապահովութիւն, այն, ինչ որ եւրոպական միացեալ կառավարութիւնները նպատակ են ունեցել նրանց համար ձեռք բերելու։

և Կոստանդնուպոլսում հայերի տառապանքները բարձրաձայն օգնություն և պաշտպանություն են աղաղակում։ Այդ տառապանքները վրդովեցնեն համայն մարդկության մարդասիրական զգացումները և աշխարհը միացած է ողբալու ու դատապարտելու այն ցեղային թշնամությունները, որոնք տիրում են Թուրքիայի բնակչության տարբեր տարրերի մեջ։ Ոչ մի ճշմարտասէր մարդ չէ կարող անտարբեր լինել նմանօրինակ դէպքերի առանց ուզենալու ուժի դիմել նրանց առաջն առնելու համար։ Ես ամենայն անկեղծու-թյամբ կը ցանկայի, որ Միացեալ-Նահանգները այդ ուժը ունենային, բայց համաձայնաբար անկեղծությամբ համոզված եմ թէ Միացեալ-Նահանգների ջանքերը, որոնք անհրաժեշտօրէն օրինական և հզօր միջամտության ուժը չունեն, կամ աննշան և կամ ոչ մի արդիւնք չպիտի բերեն, ի նկատի ունենալով մի ուրիշ պետության գործերի ու շարժառիթների բացասականությունը, անխուսափելի կերպով պէտք է յայտնուի, աւելի վնասակար հանդիսանալով, քան օգտակար այն անբախտ արարածների համար որոնց ցանկալի կը լինէր նպաստել։

Ձեր խոնարհ ծառայ՝

(Արշ.) Է. ՌՈՒՏ